

ՀԱՄԱՍՏԵՂԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Այս տարի լրանում է Համաստեղի գրական գործունեության հիսնամյակը և ծննդյան յոթանասնամյակը։

Այս առթիվ ԱՄՆ-ում կազմվել է հոբելյանական հանձնաժողով՝ արժանավայել հանդիսությամբ տոնելու անվանի գրողի հոբելյանը, մեծարելու համար հայ տաղանդավոր գրողի, հայրենասեր և աղնվահոգի հայ մարդու գրական հիսնամյա վաստակը։

Համաստեղը արևմտահայ մեր նորագույն գրականության պայծառ դեմքերից մեկն է, աննահանջ նվիրյալը, որի գրական ժառանգությունը անմեռ կմնա հայ գրականության պատմության մեջ։

Մեր գրասեր հասարակությունը, մեր մամուլն ու գրական շրջանակները իրենց երախտագիտության, հարգանքի և սիրո տուրքը կբերեն մեծ գրողին, նրա գրական գործունեության հիսնամյակի և ծննդյան յոթանասնամյակի ուրախ առիթով։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, սիրով ընդառաջելով հոբելյանական հանձնաժողովի խնդրանքին, Իր ողջույնի և օրհնության խոսքն է ուղղել հարգելի հոբելյարին հետևյալ ջերմ գրությամբ.

ՈՂՋՈՒՅՆ ՀԱՄԱՍՏԵՂԻՆ

Ինչքա՜ն նշանակալից և ինչքա՜ն միսթարական է ամենուս համար, մեր ազգային մեծ եղեռնի հիսնամյակեն անմիջապես հետո, տոնել հիսուն տարիները՝ բոլորիս սիրելի Համաստեղի գրական ստեղծագործության։

Հիրավի, այն անավոր օրերուն, երբ մեր ազգը կմեռներ ու անոր կյանքին լույսը կմարեր, ծնավ և շողալ սկսավ Համաստեղի հոգին։

Ու այնուհետև, հիսուն տարիներ շարունակ, այդ հոգին ապրեցավ և լուսավորեց, նահատակ ամբողջ ժողովուրդի մը վիշտը իր մեջ առած, պայծառ տեսիլքովը Մայր Հայաստանի վերածնունդին։

Այդ տեսիլքով և իր ամբողջ կյանքով ու գործով, Համաստեղ ինք ևս հանդիսացավ իրավ մեկ վկայությունը հայ ժողովուրդի գոյատևելու և ստեղծագործելու անմահ ուժերուն։

Ան պատմեց մեր սերունդին, ինչպես ոչ ոք, օրորի մը պես անուշ և խաղաղ ու իր հյութեղ խոսքի վրձինով, պատկերեց վճիտ ու գունագեղ՝ իր հեռավոր մանկության գյուղը հայրենի, որ այսօր երազ է միայն։

Պիտի անցնին տարիներ, պիտի գան նոր ժամանակներ, բայց Համաստեղ նույն քաղցրությամբ և նույն թարմությամբ պիտի պատմե ոսկի երազը իր հոգիին, գալիք բոլոր սերունդներուն։

Հայ գրականության երկնակամարին վրա, Համաստեղ միշտ բարձրացող աստղ մըն է։

Հայոց Մայր Հողեն, Ս. Էջմիածնեն, Օշականի Մեծ Վարդապետեն և Մեր սրտեն՝ ողջույն և օրհնություն Համաստեղին, մեր ժողովուրդի հարազատ զավկին ու անոր գրական վաստակին։

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

11 մարտ 1966
ԷՋՄԻԱԾԻՆ

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը սրտագին շնորհավորում է տաղանդավոր հոբելյարին, բարեմաղթելով նրան ստեղծագործական նոր նվաճումներ՝ ի փառս հայ մշակույթի։